Կոտայքի մարզի ԳԲԿ-1 Ջրաբեր միջին ճնշման գազատար, , 3911մետր ընդհանուր երկարությամբ, D միջինը 130մմ թողունակությամբ գազատար, Ստորգետնյա միջին ճնշման ստորգետնյա գազատարի վթարային հատվածի տեղափոխում օբյեկտի
(օբյեկտի անվանումը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), հակիրճ բնութագիրը, հիմնական ցուցանիշները)

Գազատարի վերատեղադրման նպատակով շինարարության թույլտվության համար շինարարական աշխատանքների կատարման, այդ թվում՝
(նոր կառուցման, վերակառուցման, վերականգնման, ուղեղացման և այլն)

կառուցապատվող հողամասի գլխավոր հատակագծի վրա նշված ոչ հիմնական կառույցների _____ տեղադրման համար:
(նշվում են ոչ հիմնական կառույցների անվանումները)

1.Օբյեկտի նախագծային փաստաթղթերը՝
1)մշակվել են *Աշխատանքային նախագիծ <<ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ>> ՓԲԸ «ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ*
(նախագծային փաստաթղթերի փուլը, նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը,

ՔՊԼ 17382 կողմից,
լիցենզիայի համարը)

2)ստացել է (են) _____թ. N _____փորձագիտական դրական եզրակացությունը
(եզրակացությունները) *ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ*
(նշել փորձաքննության տեսակը)

_____ կողմից
(նշել փորձաքննության մարմնի (մարմինների) անվանումը, լիցենզիայի համարը)

կամ նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորագիրը՝ *թ. N*
(Նշել նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորության պայմանագրի համար)

3)սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու մարմնի, օրենքով սահմանված այլ շահագրգիռ մարմինների *թ. N* հետ:
(նշել մարմինների անվանումները և համաձայնեցման ժամկետները)

2.Շինարարական աշխատանքներն իրականացնել *11 մարտ 2020 -11 սեպտեմբեր 2020* ընթացքում:
(նշել շինարարության նորմատիվային տևողությունը)

ներառյալ ավարտական ակտի տրամադրման համար ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:
2.1.Ապահովել օբյեկտի շահագործման թույլտվության ստացումը՝
[ ] ավարտական ակտի տրամադրումից մեկ ամսվա ընթացքում,
[ ] ավարտական ակտի տրամադրման օրը:
3.Շինարարության վարման մատյանը բաղկացած է էջից, կարված և դրոշմակնքված է կողմից:
4.Նախագծային փաստաթղթերը փոփոխվել են
(լրացվում է N 1 հավելվածի 108-րդ կետով նախատեսված դեպքերում)

_____ կողմից
(նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

և սահմանված կարգով համաձայնեցվել իրավասու մարմնի _____ և այլ
(նշել իրավասու մարմնի անվանումը)

շահագրգիռ մարմինների _____ հետ:
(նշել օրենքով սահմանված համաձայնեցնող մարմինների անվանումները)

5.Հատուկ պայմաններ՝
1)Կառուցապատողը նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.
2)Շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները.
3)(լրացվում է N 1 հավելվածի 84-րդ կետով սահմանված դեպքերում) սույն թույլտվությունը տրվել է սահմանված կարգով հաստատված «Նախագիծ» փուլի հիման վրա, որին հաջորդող «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը պետք է ապահովի հաստատված փուլով ընդունված լուծումները և աշխատանքների իրականացման հաջորդականությունը

_____
(նշվում են նախապատրաստական, հողային, շինմոնտաժային աշխատանքները և այլ աշխատանքներ)

6.(լրացվում է N1 հավելվածի 13-րդ կետով սահմանված դեպքերում)
Հաշվի առնելով, որ կառուցվող օբյեկտի շինարարությունը հնարավոր չէ առանց գլխավոր հատակագծի վրա համարների տակ նշված շենքի (շենքերի) և կամ շինության

(շինությունների) _____ քանդման՝
(նշվում են ամբողջությամբ կամ մասամբ քանդման ենթակա օբյեկտները, դրանց հիմնական ցուցանիշները, ընդհանուր մակերեսը, հարկայնությունը, շինանյութերը և այլն)

սեփականատիրոջը (օգտագործողին) _____
(նշվում է պետական գրանցման վկայականի համարը)

տրված սույն թույլտվությունը նաև քանդման թույլտվություն է:
Օբյեկտի քանդման աշխատանքներն իրականացնել նախագծային փաստաթղթերով ամրագրված հաջորդականությամբ:

7.Այլ պայմաններ _____
(նշվում են իրավական ակտերով և (կամ) պայմանագրով նախատեսված այլ պայմանները)

8.Կառուցապատողը շինարարական (քանդման, ապամոնտաժման) աշխատանքները սկսելուց առնվազն 3 օր առաջ համաձայն N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկացնում է իրավասու մարմնին:
9.Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՄԱՐՏԻ 2020թվականի N 94

<<ԱՂԱՍԻ ՌՈՒԲԵՆՅԱՆԻ ՀՈՒՆԱՆԻ>> ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 45 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի19 N 843-Ն որոշման, հիմք ընդունելով <<Աղասի Ռուբենյան Հունանի>> անհատ ձեռնարկատիրոջ կողմից ներկայացված հայտը՝ որոշում եմ .

1.Ակունքի համայնքում մանրածախ առևտրով զբաղվող Ակունք գյուղի Կենտրոնական խճուղի 72/5 հասցեի <<Աղասի Ռուբենյան Հունանի>> անհատ ձեռնարկատիրոջը տալ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ 2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի մարտի 31-ը ընկած ժամանակահատվածի համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

2020 թ. մարտի 11
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N ՈՒԽԾ - 23

ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ

Տրված՝ ***11 մարտ 2020թ.***

Վաճառքի կամ իրացման թույլատրված ապրանքի անվանումը՝
Ոգելից խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառք:

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպաիրավական ձևը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և գտնվելու վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝
<<ԱՂԱՍԻ ՌՈՒԲԵՆՅԱՆ>> ԱՁ, Կոտայքի մարզ Ակունք համայնք գյուղ Ակունք Կենտրոնական խճուղի 72/5, ՀՎՀՀ՝ 80522084:

Գործունեության տեսակի իրականացման վայրը՝
Կոտայքի մարզ Ակունք համայնք գյուղ Ակունք Կենտրոնական խճուղի 72/5,

Շինության տեսակը՝
Հիմնական շինություն, 146 քմ:

Թույլտվության գործողության ժամկետը՝
01 հունվար 2020-ից մինչև ***31 մարտ 2020***-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՄԱՐՏԻ 2020թվականի N 93

ՎԱՍԱԿ ՍԵՐԺԻԿԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐ ԳՅՈՒՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կտայքի մարզի Ակունք համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան /նկարագրական մաս/.
Համաձայն Կոտայքի մարզպետի 2018 թվականին հոկտեմբերի 25-ի թիվ 320-Ա որոշմամբ ստեղծված գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի վրա իրականացրած ինքնակամ և ՀՀ հողային օրենսդրությանն ու քաղաքաշինական նորմերին չհամապատասխանող կառուցապատումները ուսումնասիրող աշխատանքային խմբի տեղեկատվություն և Կոտայքի մարզպետի 28.12.2018 թվականի թիվ 01/19.1/7269-18 գրության քաղաքացի Վասակ Սերժիկի Մարտիրոսյանի կողմից գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի վրա իրականացրած ինքնակամ շենք-շինությունների կառուցման համար ենթարկել վարչական տուժի:
Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը համաձայն <<Վարչական իրավախախտումների մասին>> օրենսգրքի տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ: <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> օրենսգրքի 154-րդ հոդվածի հողամասերը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելը՝առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով: Հաշվի առնելով վերը նշված փաստական ու իրավական հիմնավորումները և հիմք ընդունելով <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> օրենսգրքի 9-ր հոդվածի 1-ին մասը, 10-րդ, 32-րդ, 40-րդ, 154-րդ հոդվածը և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետը որոշում եմ.

1. Քաղաքացի Վասակ Սերժիկի Մարտիրոսյանին ենթարկել վարչական պատասխանատվության <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> օրենսգրքի 154-րդ հոդվածով նախատեսված արարք կատարելու համար և նշանակել տուգանք 100.000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

2. Պարտավորեցնել տուգանքի գումարը վճարել Ակունքի համայնքապետարանի 900105203104 հաշվեհամարին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն ստանալու հաջորդ օրը և կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարանին՝ երկամսյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20.20 թ. _____ 11

գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՄԱՐՏԻ 2020թվականի N 92

ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածի,«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի ,հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի13-ի թիվ 62 որոշումը,2020թվականի մարտի 9-ին Ակունքի համայնքապետարանում կայացած աճուրդի թիվ 10 արձանագրությունը՝որոշում եմ ՝

1.Գյուղնշանակության 10.0 հա հողամասը, որից 7.2692 վարելահող,1.1772 արոտավայր,1.5536 հա այլ հողատեսք,հասցեն՝ գյուղ Կոտայք, օտարել Դավիթ Խաչիկի Սամվելյանին 2 380 000 դրամով :

2.Սույն որոշման նոտարական վավերացման պարտականությունները դնել Սաշիկ Նշանի Գրիգորյանի վրա :

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված ժամկետով գումարի մնացած մասը մուծելու օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 20 թ. Մարտի 10
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՄԱՐՏԻ 2020թվականի N 91

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, հիմք ընդունելով կառուցապատող <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ -ի հայտը, որոշում եմ՝

1. Կառուցապատող՝ <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ին տրամադրել ճարտարապետահատակագծային առաջադրանք համայնք Ակունք Նոր գյուղ բնակավայրի հողամասի վրա ստորգետնյա գազատարի վերատեղադրման համար :

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 10թ. 10
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
10 ՄԱՐՏԻ 2020թվականի N 90

ԳԱԳԻԿ ՎԱՍԱԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ,ՀԱՄԱՍՓՅՈՒՌ ՋԱՆԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ,ԳԱՅԱՆԵ ԳԱԳԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ,ԳՈՀԱՐ ԳԱԳԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ,ԳԱՐԻԿ ԳԱԳԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԵՎ ՎԱՍԱԿ ԳԱԳԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006թ-ի մայիսի 18-ի N 912-Ն որոշման կարգի 8.1,10,11 և 22 կետերի պահանջներով, հիմք ընդունելով Գագիկ Վասակի Գրիգորյանի դիմումը,<<ԳԻՍ ԱՐՏ>> ՍՊ ընկերության կողմից հաստատված հատակագիծը և հաշվի առնելով, որ Մարզ Կոտայք, համայնք Ակունք գյուղ Ակունք 15-րդ փողոց թիվ9 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 38.75քմ արտաքին չափով բնակելի տան և բացված երկու դռան, երկու պատուհանի, փակված երկու դռան և մեկ պատուհանի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումների և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք որոշում եմ.

1. Գագիկ Վասակի Գրիգորյանին, Համասփյուռ Ջանիկի Գրիգորյանին, Գայանե Գագիկի Գրիգորյանին, Գոհար Գագիկի Գրիգորյանին, Գարիկ Գագիկի Գրիգորյանին և Վասակ Գագիկի Գրիգորյանին պատկանող հողամասում ինքնակամ կառուցված 38.75քմ արտաքին չափով բնակելի տունը և բացված երկու դուռը,երկու պատուհանը,փակված երկու դուռը և մեկ պատուհանը համարել օրինական:
2. Պարտավորեցնել նրան ինքնակամ կառուցված շինության օրինականացման համար համայնքային բյուջե / 900105203211 հաշվեհամար/ կատարել վճարում՝ բնակելի տան մեկ մետր քառակուսու համար 1300դրամ,իսկ բացված և փակված պատուհանների և դռների համար յուրաքանչյուր փոփոխության համար 1300 դրամ, ընդամենը 59475 /հիսունինը հազար չորս հարյուր յոթանասունհինգ /ՀՀ դրամ:
3. Որոշումն ուժի մեջ է ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20 մարտ 10 թ.
Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ. գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՄԱՐՏԻ 2020թվականի N 89

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 6-Ի ԹԻՎ 87 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի, որոշում եմ

1.Համայնքի ղեկավարի 2020 թվականի մարտի 6-ի <<Հողի նպատակային նշանակությունը փոխելու և հասցե տրամադրելու մասին >> թիվ 87 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1-ին կետի <<բնակավայրերի բնակելի կառուցապատման>> փոխարինել <<էներգետիկայի, կապի,տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների>> բառերով :

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 20 թ. մարտի 9
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՄԱՐՏԻ 2020թվականի N 88

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով և Հայաստանի Հանրապետության կառավարության 23 հուլիսի 2015 թվականի N 828-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի պահանջներով, որոշումեմ.

1. Համայնքային սեփականություն համարվող 07-009-0050- և 07-0009-0050- ծածկագրերով բնակավայրերի նշանակության հողամասերի միավորման արդյունքում առաջացած միավորի գործառնական նշանակությունը համարել փոխված հասարակական կառուցապատման հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով հասարակական կառուցապատում իրականացնելու համար:
2. Գործառնական նշանակությունը փոփոխված հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք,համայնք Ակունք գյուղ Ակունք Կենտրոնական փողոց թիվ 90/2:
3. Սույն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20 20թ. մարտի 06
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՄԱՐՏԻ 2020թվականի N 87

ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 143-րդ հոդվածի 12-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի ,համայնքի ավագանու 17 հունվարի 2020 թվականի թիվ 6 որոշումը,որոշում եմ

1. Համայնքային սեփականության հանդիսացող /հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 03102019-07-0071 վկայական/ Կոտայքի մարզի Ակունք համայնքի Հատիս վարչական տարածքում 07-040-0138-0146 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը՝ 0.02 հա մակերեսով, փոխադրել բնակավայրի բնակելի կառուցապատում հողերի կատեգորիա:
2. 0.02 հա անշարժ գույքին տրամադրել հասցե՝մարզ Կոտայք,համայնք Ակունք գյուղ Հատիս 138 թաղամաս թիվ 146:
3. Սույն որոշման առաջին կետում նշված հողի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում
4. Սույն որոշման ուժը մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 20թ. Մարտի 06
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՄԱՐՏԻ 2020թվականի N 86

<<ԹԱԹՈՍ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԳԵՂԱՄԻ>> ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 45 հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, հիմք ընդունելով Թաթոս Գեղամի Մաթևոսյանի կողմից ներկայացված հայտը ՝ որոշում եմ ՝

1.Ակունք համայնքում ավտոլվացման ծառայության օբյեկտում մանրածախ առևտրով զբաղվող Նոր գյուղ գյուղի << Թաթոս Մաթևոսյան Գեղամի >> անհատ ձեռնարկատիրոջը տալ հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն՝ 2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 20 թ. _____
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ ՀՎԳ - 02

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ, ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԿԱՄ ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ՆԱՎԹԱՅԻՆ ԳԱԶԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ

Տրված՝ ***05 մարտ 2020թ.***

Վաճառքի թույլատրված ապրանքի անվանումը՝
Հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների վաճառք:

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպաիրավական ձևը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և գտնվելու վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝
<<ԹԱԹՈՍ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԳԵՂԱՄԻ>> ԱՁ, ՀՀ Կոտայքի մարզ, Ակունք համայնք, գյուղ Նոր գյուղ 1-ի փողոց, ՀՎՀՀ՝ 86291909:

Գործունեության տեսակի իրականացման վայրը՝
ՀՀ Կոտայքի մարզ, Ակունք համայնք, գյուղ Նոր գյուղ 1-ի փողոց:

Շինության տեսակը՝
Հիմնական շինություն, 30քմ:

Թույլտվության գործողության ժամկետը՝
01 հունվար 2020-ից մինչև ***31 դեկտեմբեր 2020***-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՄԱՐՏԻ 2020թվականի N 85

ՔԱՋԻԿ ՕՆԻԿԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետով,Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29 թիվ 2387-Ն որոշման կարգի 29-րդ կետով.որոշում եմ.

1. Քաջիկ Օնիկի Գասպարյանին պատկանող /ծածկագիր 07-028-0015-0001/ անշարժ գույքի բաժանման արդյունքում առաջացած միավորներին տրամադրել հասցե.
   1)S1=0.4470հա մակերեսով հողամասին՝ մարզ Կոտայք համայնք Ակունք գյուղ Զովաշեն 5-րդ փողոց թիվ 1:
   2)S2=0.1600հա մակերեսով հողամասին՝ մարզ Կոտայք համայնք Ակունք գյուղ Զովաշեն 5-րդ փողոց թիվ 1/1:

2.Որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 20թ. Մարտի 05
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՄԱՐՏԻ 2020թվականի N 84

ՔԱՋԻԿ ՕՆԻԿԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006թ-ի մայիսի 18-ի N 912-Ն որոշման կարգի 10.11.22 կետերի պահանջներով,հիմք ընդունելով Քաջիկ Օնիկի Գասպարյանի դիմումը,<<ԳԻՍ ԱՐՏ>> ՍՊ ընկերության կողմից հաստատված հատակագիծը և հաշվի առնելով, որ Մարզ Կոտայք, համայնք Ակունք գյուղ Զովաշեն 5-րդ փողոց թիվ 1 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 17.64քմ արտաքին չափով ծածկի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումների և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք որոշում եմ.

1. Քաջիկ Օնիկի Գասպարյանին պատկանող հողամասում ինքնակամ կառուցված 17.64քմ արտաքին չափով ծածկը ճանաչել օրինական:
2. Պարտավորեցնել նրան ինքնակամ կառուցված շինության օրինականացման համար համայնքային բյուջե / 900105203211 հաշվեհամար/ կատարել վճարում՝ մեկ մետր քառակուսու համար 330դրամ, ընդամենը 5820 /հինգ հազար ութ հարյուր քսան /ՀՀ դրամ:
3. Որոշումն ուժի մեջ է ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

2020 թ. 05

գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՄԱՐՏԻ 2020թվականի N 83

ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԴԵՊՔՈՒՄ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի N919-Ն որոշման կատարումն ապահովելու նպատակով՝ որոշում եմ ՝

1. Հաստատել՝ Ակունք համայնքի .

1) ուժեղ երկրաշարժի դեպքում Կոտայքի մարզի Ակունք համայնքի բնակչության պաշտպանության պլանը՝ համաձայն N 1 հավելվածի.
2) ուժեղ երկրաշարժի դեպքում Ակունք համայնքի բնակչության պաշտպանության միջոցառումների կառավարման սխեման՝ համաձայն N 2 հավելվածի.
3) ինժեներական տեխնիկայի ապահովման հաշվարկը՝ համաձայն N 3 հավելվածի.
4) ուժեղ երկրաշարժի դեպքում Ակունք համայնքին հասցված վնասների հաշվարկը՝ համաձայն N 4 հավելվածի.
5) տուժածներին տրվող հագուստի,ներքնազգեստի և կոշիկի հաշվարկը՝ համաձայն N 5 հավելվածի.
6) տարահանված բնակչությանը և որոնողափրկարարական աշխատանքների մասնակիցներին սննդամթերքով ապահովման հաշվարկը՝ համաձայն N 6 հավելվածի
7) տարահանված բնակչության վրանային ավանի համար ապրանքներով ապահովման հաշվարկը՝ համաձայն N 7 հավելվածի
8) Երկրաշարժի դեպքում բնակչության տարահանման քարտեզ-սխեմա ՝ համաձայն N 8 հավելվածի.

2.Սույն որոշման կատարման պատասխանատվությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալի վրա :

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 20 թ. _____
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՄԱՐՏԻ 2020թվականի N 82

ԳԱՌՆԻԿ ՄՆԱՑԱԿԱՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48 –րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, համայնքի ավագանու 2018 թվականի մայիսի 18-ի թիվ 31 որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի պահանջներով, , հիմք ընդունելով 2020 թվականի մարտի 5-ի կարիքի գնահատման թիվ 8 արձանագրությունը և Ակունք համայնքի Կոտայք բնակավայրի բնակիչ Գառնիկ Մնացականի Ավետիսյանի դիմումը, որոշում եմ՝

1.Ակունք համայնքի բնակիչ Գառնիկ Մնացականի Ավետիսյանին տրամադրել ֆինանսական օգնություն՝ 50 000 (հիսուն հազար) դրամ :

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

2020թ. մարտի 05
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՄԱՐՏԻ 2020թվականի N 81

ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի Կապուտան բնակավայրի անասնաբույժ՝ Սամվել Ադամյանին տալ պարգևատրում՝ մեկ ամսվա աշխատավարձի չափով համաձայն հաստիքացուցակի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Հարգանքով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20 20 թ. մարտի 04.
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՄԱՐՏԻ 2020թվականի N 80

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի ԹԻՎ 74 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի, որոշում եմ

1.Համայնքի ղեկավարի 2020 թվականի փետրվարի 27-ի «Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասին հասցե տրամադրելու մասին» թիվ 74 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1-ին կետում «0.10638» թիվը փոխարինել«0.10705» թվով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20 20թ. մարտի 03
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՄԱՐՏԻ 2020թվականի N 79

ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն Ակունք համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N 61-Ն որոշման 2-րդ կետի , որոշում եմ՝

Համայնքի 2020 թվականի բյուջեում կատարել վերաբաշխում .

1. Համայնքի բյուջեի 01 բաժնի 01 խմբի 01 դասի <<Օրենսդիր, գործադիր մարմիններ, պետական կառավարում>> ծրագրի 4222 հոդվածի 1-ին եռամսյակից 25 000 դրամ տեղափոխել 4233 հոդվածի 1-ին եռամսյակ:

2. Համայնքի բյուջեի 08 բաժնի 02 խմբի 04 դասի <<Այլ միջոցառումների կազմակերպում>> ծրագրի 4239 հոդվածի 1-ին եռամսյակից 500 000 դրամ տեղափոխել 10 բաժնի 07 խմբի 01 դասի <<Սոց. օգնություն անապահով ընտանիքներին>> ծրագրի 4729 հոդվածի 1-ին եռամսյակ:

3.Համայնքի բյուջեի 06 բաժնի 03 խմբի 01 դասի <<Ջրամատակարարում>> ծրագրի 5113 հոդվածից 1 500 000 դրամ տեղափոխել 5134 հոդված:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20[illegible]թ. մարտի 03
գ. Ակունք